ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

_____ ի 2015 թվականի N -Ն

ՀԱՏԱՏԵՂԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԶՆՆՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի N111-Ն որոշման N1 հավելվածի 17-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել հատատեղերի հատկացման և տեղազննման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հավելված
ՀՀ կառավարության 2015 թվականի
----------ի N -Ն որոշման

ԿԱՐԳ

ՀԱՏԱՏԵՂԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԶՆՆՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության պետական (բացառությամբ բնության հատուկ պահպանվող տարածքների) անտառներում հատատեղերի հատկացման և տեղազննման կարգը:

2. Հատատեղը հատուկ ցուցանակով նշագրված կամ բնական սահմաններով անջատված անտառամաս է, որտեղ նախատեսված է կատարել բնափայտի մթերման աշխատանքներ:

II. ՀԱՏԱՏԵՂԵՐԻ ՀԱՏԿԱՑՈՒՄԸ

3. Տարեկան հատատեղերի հատկացման նպատակով նախորդ տարվա մինչև հունիսի 15-ը «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) հանձնարարում է Կազմակերպության «Անտառտնտեսություն» մասնաճյուղերին (այսուհետ՝ Անտառտնտեսություն), տեղերում կատարել հատատեղերի հատկացման նախապատրաստական աշխատանքներ:

4. Անտառտնտեսության համապատասխան մասնագետները հատատեղերի հատկացումից առաջ կատարում են հետևյալ նախապատրաստական աշխատանքները.

1) Հատատեղի համար հատկացվող անտառամասերի բնական պայմաններում ուսումնասիրում և տեղազննում,

2) հատատեղերում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N 897-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի սեպտեմբերի 7-ի N 1412-Ն որոշումների դրույթների, անտառգնահատման ցուցանիշների ուսումնասիրման նպատակով փորձահրապարակների հիմնում: Փորձահրապարակներն առանձնացվում են ցուցանակներով, որոնք տեղադրվում են փորձահրապարակների անկյուններում: Ցուցանակի վրա գրվում է «ՓՀ» (փորձահրապարակ),

3) հատատեղը մատնանշող ցուցանակի փակցնում,

4) հատատեղի հաշվեգնահատման ցուցակի և հատատեղի անձնագրի լրացում համաձայն Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 5-ի N142-Ն հրամանով հաստատված N1 և N2 ձևերի:

5. Հատատեղերի հաշվեգնահատումն իրականացվում է անտառտնտեսության աշխատակիցների կողմից համապատասխան մասնագետի ղեկավարությամբ (ավագ անտառապետ, անտառապետ, անտառային տնտեսության ինժեներ):

6. Հատատեղի սկզբնամասում, հատման չնշանակված անկյունային ծառի վրա, համաձայն սույն կարգի 4-րդ կետի 3-րդ ենթակետի, փակցվում է ցուցանակ, որի վրա յուղաներկով գրառումը ներառում է.

1) 1-ին տող – քառակուսու և հատվածի համարները, հատատեղի մակերեսը (հա),

2) 2-րդ տող – հատման տեսակը՝ անտառվերականգնման (ըստ ձևերի՝ կամավոր- ընտրովի հատում, խմբակային-ընտրովի հատում), խնամքի (ըստ տեսակների՝ մաքրում, լուսավորում, նոսրացման, անցումային), սանիտարական (ընտրովի կամ համատարած), այլ հատումներ և հատման տարին:

7. Այն ծառուտներում, որտեղ անտառկառավարման պլաններով հատումներ չեն նախատեսված, սակայն դրանց անհրաժեշտությունն առաջացել է ընթացիկ ժամանակաշրջանում (բնական երևույթների այլ բացասական ներգործությունների հետևանքով արմատախիլ և/կամ գետնատապալ, հրդեհների, վնասատուների, հիվանդությունների և այլ բացասական ներգործության հետևանքով կենսունակությունը կորցրած կամ ցցաչոր և չորացած ծառեր) հատատեղերի հատկացումը կատարվում է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության (այսուհետ՝ լիազորված մարմին) կողմից ստեղծված մասնագիտական հանձնախմբի փաստացի ուսումնասիրությունների արդյունքում կազմված հետազոտման ակտի հիման վրա:

8. Հատատեղերի հատկացման նախապատրաստական աշխատանքները կատարվում են ամռան-աշնան ժամանակահատվածում՝ հատումներին նախորդող տարվա ընթացքում:

9. Հատատեղերի հատկացումից առաջ կատարված նախապատրաստական աշխատանքներն ավարտելուց հետո նյութերը (լրացված հատատեղի հաշվեգնահատման ցուցակը և հատատեղի անձնագիրը) Անտառտնտեսությունը մինչև հոկտեմբերի 10-ը տրամադրում է Կազմակերպությանը, որը ստուգելով և ամփոփելով դրանք՝ հաջորդ տարվա

հաշվարկային հատատեղերը (տարեկան հատումների ծավալները) հաստատելու համար, մինչև դեկտեմբերի 15-ը ներկայացնում է լիազորված մարմնին:

10. Տարեկան հատումների ծավալները լիազորված մարմնի ղեկավարի կողմից հաստատվում է մինչև հունվարի 15-ը և տրամադրվում Կազմակերպությանը:

11. Կազմակերպությունը հատատեղերի շահագործման տարվա մինչև փետրվարի 1-ը տարեկան հատումների ծավալները տեղայնացնում է անտառտնտեսություններում:

12. Ըստ անհրաժեշտության՝ ընթացիկ տարում, կարող է հատկացվել լրացուցիչ հատատեղ (հատատեղեր) սույն կարգի դրույթներին համապատասխան:

13. Բնական ծագում ունեցող ծառուտներում անտառվերականգնման, խնամքի և ընտրովի սանիտարական հատումների ժամանակ հատման համար ծառերի հատկացումը կատարվում է ճանապարհներից, գետերից, ջրավազաններից կամ անտառի վերին և ստորին եզրերին անմիջական հարող տարածքներից նվազագույնը 50 մ հեռավորությամբ:

III ԱՐՄԱՏԻ ՎՐԱ ԾԱՌՈՒՏԻ (ՓԱՅՏԱՆՅՈՒԹԻ) ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

14. Արմատի վրա ծառուտի (փայտանյութի) հաշվառումը, կախված հատման եղանակից, կատարվում է.

1) ըստ տարածքի (հա)

2) հատման նշանակված ծառերի ծավալով (քանակով)

3) մթերված փայտանյութի ծավալով:

15. Հաշվառումն ըստ տարածքի կատարվում է համատարած հատումների ժամանակ:

16. Հաշվառումն ըստ հատման նշանակված ծառերի քանակի կատարվում է.

1) անտառվերականգնման հատումների,

2) խնամքի՝ նոսրացման, անցումային հատումների,

3) սանիտարական՝ ընտրովի,

4) այլ հատումների (առանձին ծառերի) ժամանակ:

17. Մթերված փայտանյութի ծավալով հաշվառումը կատարվում է.

1) խնամքի՝ լուսավորման և մաքրման հատումների ժամանակ

2) խնամքի՝ նոսրացման և անցումային հատումների ժամանակ, եթե հատման նշանակված ծառերի միջին տրամագիծը պակաս է 8 սմ-ից:

18. Մթերված փայտանյութի ծավալով հաշվառման ժամանակ անտառահատման տոմսում փայտանյութի մթերման նախատեսվող պաշարը նշվում է փորձահրապարակներից ստացված տվյալների հիման վրա՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N 897-Ն որոշման 37-րդ և 38-րդ կետերի:

19. Փորձահրապարակներում մթերված փայտանյութը դարսվածքներով տեսակավորվում է (շինափայտ, վառելափայտ), չափվում է ծավալը: Փորձահրապարակի միջինացված տվյալները տարածվում են հատատեղի (հատամասի) ամբողջ տարածքի վրա և ձևակերպվում են հանձնաժողովի կողմից կազմված համապատասխան արձանագրությամբ, որը կցվում է անտառահատման տոմսին:

20. Հաշվառման բոլոր տեսակների դեպքում փայտանյութի ծավալը որոշվում է խտացված (խիտ) խորանարդ մետրերով:

21. Փայտանյութի ծավալները հաշվարկվում են հիմնականում Անդրկովկասյան գիտահետազոտական անտառային ինստիտուտի կողմից հրատարակված ծավալային աղյուսակներով: Նշված աղյուսակներում բացակայող ծառատեսակների ծավալային տվյալները (ծառատեսակներ և բոնիտետ) հաշվարկելու համար հիմք է հանդիսանում Անտառավարի համառոտ տեղեկատուի տվյալները (Հախինյան Հ., Վանաձոր, 1996թ.):

22. Հատման նշանակված ծառերի տրամագիծը հարթ տեղանքում՝ չափվում է հողի մակերեսից կրծքավանդակի 1,3 մ բարձրության վրա, իսկ լանջի դեպքում կրծքավանդակի 1,3 մ բարձրությունը չափվում է հորիզոնականով, ծառի կողքից: Չափումներն իրականացվում են չափիչ երկմատով: Ճշգրիտ տրամագիծը ստանալու նպատակով չափումը կատարվում է միմյանց հակադիր կողմերից և դուրս է բերվում միջինը: Չափիչ երկմատից որպես տրամագծային ցուցանիշ վերցվում է այն թվանշանը, որը երևում է շարժական մատի ներսի կողմից:

23. Հաշվառման ենթակա ծառերի համարակալումն ու դրոշմումը կատարվում է հողի մակերեսից կրծքավանդակի 1,3 մ բարձրության վրա 8սմ և ավել հաստության տրամագծից սկսված, ըստ հերթականության՝ ծառի արմատավզիկի վրա կեղևը նախապես տաշելով: Համարակալումը կատարվում է յուղաներկով և ընթեռնելի, բացառելով սպիտակ և դեղին գույները:

24. Հատման ենթակա, բայց չհամարակալված և չդրոշմված մինչև 8 սմ տրամագիծ ունեցող ծառերի տրամագծերը չեն չափվում և չեն հաշվառվում հաշվեգնահատման ցուցակում, սակայն

բնի կենտրոնական մասում կատարվում է թեթև տաշվածք կամ ներկվում է, որպեսզի հատատեղի շահագործման ժամանակ լինեն նշմարելի:

25. Անտառահատման տոմսով սահմանված ժամկետներում հատատեղերի շահագործման ավարտից հետո կամ հատմանը զուգահեռ կատարվում են հատատեղերի մաքրման աշխատանքներ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի սեպտեմբերի 7-ի N 1412-Ն որոշման 5-րդ բաժնի:

IV ՀԱՏԱՏԵՂԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԵԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈՐԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

26. Հատատեղերի հատկացման և հաշվեգնահատման աշխատանքների որակի նկատմամբ հսկողությունն իրականացվում է ինչպես Կազմակերպության, այնպես էլ կարող է իրականացվել լիազորված մարմնի միջոցով:

27. Հսկողության ընթացքում.

1) ուսումնասիրվում և համեմատվում են հատկացվող հատատեղերի համապատասխանությունն անտառկառավարման պլանի հետ, որի արդյունքում հաշվի են առնվում հատատեղի հատկացման վայրը (անտառպետությունը, քառակուսին, անտառամասը), նախատեսված հատման տեսակը, եղանակը,

2) ստուգվում են հատատեղի հաշվեգնահատման տվյալների ճշտությունը, հատման նշանակված ծառերի համարակալման և դրոշմման որակը, ինչպես նաև հատատեղերի շահագործման ընթացքը:

28. Եթե սույն կարգի 24-րդ կետի 1-ին ենթակետով իրականացված ուսումնասիրության արդյունքները չեն համապատասխանում անտառկառավարման պլանին, ապա ստուգվում է պետական կառավարման լիազորված մարմնի կողմից սահմանված կարգով ստեղծած մասնագիտական հանձնաժողովի կամ հանձնախմբի փաստացի ուսումնասիրությունների և եզրակացությունների կամ հետազոտման ակտի առկայությունը:

29. Անտառտնտեսությունում իրականացվող հատատեղերի ուսումնասիրություններն ընդգրկում են հատատեղի հատման նշանակված ծառերի քանակի ոչ պակաս 10%-ը:

30. Հատատեղերի հատկացման և հաշվեգնահատման աշխատանքները գնահատվում են անբավարար, եթե առկա է ստորև նշված թերություններից որևէ մեկը.

1) հատկացվող հատատեղն առանց համապատասխան հիմնավորման չի համապատասխանում անտառկառավարման պլանով սահմանված տարածքին, հատման տեսակին, չափաքանակին.

2) հատման համար ծառերի ընտրության սխալն ընդհանուր հատման նշանակված ծառերի մեջ կազմում է 10%-ից ավելի.

3) հատատեղերի հաշվեգնահատման նյութերում փայտանյութի ընդհանուր պաշարի հաշվարկի սխալը գերազանցում է ընդհանուր ծավալի՝ ինչպես շինափայտի, այնպես էլ վառելափայտի համար 10%-ը,

4) անընթեռնելի համարակալումներով ծառերի քանակը հատատեղում հատման նշանակված ընդհանուր ծառերի քանակի մեջ կազմում է 10% և ավելի:

31. Հաշվեգնահատման տվյալները ստուգելիս, անտառտնտեսության ավագ անտառապետը ներկայացնում է սույն կարգի 21-րդ կետի համաձայն, այն նյութերը, որոնք հիմք են հանդիսացել փայտանյութի ծավալները հաշվարկելիս:

32. Հատատեղերի հատկացման և հաշվեգնահատման աշխատանքների որակի ուսումնասիրությունները ձևակերպվում են արձանագրությամբ:

33. Հատատեղերի հատկացման և հաշվեգնահատման աշխատանքներն անբավարար լինելու դեպքում, Անտառտնտեսությունը 20 օրյա ժամկետներում կատարում է հատատեղերի հատկացման անճշտությունների ուղղում և այդ մասին տեղեկացնում է Կազմակերպությանը:

VI. ՀԱՏԱՏԵՂԻ ՏԵՂԱԶՆՆՈՒՄԸ

34. Հատատեղի շահագործումից (հատում, քարշակում և փայտանյութի դուրսբերում) հետո, Կազմակերպության կողմից կատարվում է հատատեղի տեղազննություն:

35. Տեղազննության նպատակն է պարզել.

1) տարկետմամբ չձևակերպված թերհատումների առկայությունը,

2) հատատեղում հատման չնշանակված հատված ծառերի առկայությունը,

3) հատման չնշանակված տապալված, ջարդված կամ վնասված ծառերի առկայությունը,

4) վնասված կամ ոչնչացված երիտասարդ և մատղաշ ծառերի առկայությունը,

5) հատատեղից մթերված և դուրս չբերված (չիրացված) փայտանյութի քանակությունը,

6) հատատեղի շահագործման արդյունքում բարձր կոճղերի (հատված ծառի բնի տրամագծի 1/3-ից ոչ ավելին) առկայությունը,

7) անբավարար մաքրված հատատեղը:

36. Հատատեղի տեղազննության արդյունքում կազմվում է հատատեղի տեղազննման ակտ համաձայն Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 5-ի N142-Ն հրամանով հաստատված N1 հավելվածում սահմանված N3 ձևի:

37. Հատատեղերի տեղազննությունը կատարվում է մինչև հաջորդ տարվա մայիսի 30-ը:

38. Առկա թերհատների շահագործումը և անտառահատման տոմսի ժամկետի երկարաձգումը կատարվում է Կազմակերպության որոշմամբ՝ հատատեղերի տեղազննման արդյունքների ամփոփումից հետո:

Հիմնավորում

«Հատատեղերի հատկացման և տեղազննման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ

Անհրաժեշտությունը՝ «Հատատեղերի հատկացման և տեղազննման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունմամբ կկանոնակարգվեն հատատեղերի հատկացման և տեղազննման գործընթացները, հնարավորինս կնվազեն տարածքների ընտրության գործում անճշտությունները:

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները՝ Ներկայումս հատատեղերը հատկացվում են՝ հիմք ընդունելով անտառակառավարման պլանները և պետական կառավարման լիազորված մարմնի ղեկավարի հրամանները: Սակայն, անտառակառավարման պլանով սահմանված տարածքների նախապես ընտրության, տեղազննման, ուսումնասիրման, հատման տեսակների ընտրության և այլ աշխատանքներ իրականացվում են չկանոնակարգված կերպով, աշխատանքային փորձի հիման վրա:

Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը՝ «Հատատեղերի հատկացման և տեղազննման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը չի նախատեսում գործող քաղաքականության փոփոխություն:

Անտառային տնտեսության բնագավառում իրականացվող քաղաքականությունը նպատակաուղղված է Հայաստանի Հանրապետության անտառների և անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործմանը:

Կարգավորման նպատակը և բնույթը՝ «Հատատեղերի հատկացման և տեղազննման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը հաստատվելուց հետո կսահմանվի հատատեղերի հատկացման, փայտանյութի հաշվառման, դրանց որակի նկատմամբ հսկողության և հատատեղերի տեղազննման իրավահարաբերությունները:

Ակնկալվող արդյունքը՝ Նախագծի ընդունումը հնարավորություն կընձեռի խուսափելու կամ հնարավորինս նվազագույնի հասցնելու հատատեղերի հատկացման գործում տեղ գտած անճշտությունները:

Միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հետ համապատասխանությունը՝ «Հատատեղերի հատկացման և տեղազննման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը համապատասխանում է միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններին:

Տեղեկանք

«Հատատեղերի հատկացման և տեղազննման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության բացակայության մասին

«Հատատեղերի հատկացման և տեղազննման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

Տեղեկանք

«Հատատեղերի հատկացման և տեղազննման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացման կամ նվազեցման բացակայության մասին

«Հատատեղերի հատկացման և տեղազննման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում ծախսերի և եկամուտների էական նվազեցում չի առաջանում: